

ՄԵԼԳՈՆՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄՆ ԱՐԴԵՆ ՄԻ՞Ֆ Է

Երեւանի Նոր Նորք թաղամասում նրան «փոխարինող» նոր վարժարան է հիմնվում

ՅԲԸՄ-ի կրթական առաքելությունը աշխարհի տարբեր անկյուններում բեկորների պես ցրված հայկական դպրոցների վիճակի բարելավումն ու դրանց սաներին հայ իրականությանը, ակունքներին, լեզվին ու մշակույթին կապելու բարդ խնդրի իրականացումն է: Համենայն դեպս, միության կրթական բանաձեւն այսպես է բնութագրում ՅԲԸՄ կրթական բաժնի տնօրեն Արթուն Համալյանը: Նման առաքելության տրամաբանության մեջ ոչ մի կերպ չի տեղավորվում Կիպրոսի Մելգոնյան վարժարանի հետ կատարվածը: Նրանք, ում զավակներից կամ մերձավորներից որեւէ մեկին բախտ է վիճակվել ուսանել բարձրակարգ այս կրթարանում, այսօր միայն երախտիքով ու ծայր ափսոսանքով են տալիս նրա անունը: Ինչո՞ւ փակվեց համբավվոր վարժարանը:

Այս պահին եւ ԱՄՆ-ում, եւ Կիպրոսում միաժամանակ դատավարություններ են ընթանում վարժարանի փակման կապակցությամբ: Կիպրոսի կառավարությունը վստահաբար հայտարարել է, որ շենքը չի կարելի քանդել, քանի որ պատմական արժեք է: Հիշենք, որ շենքը կանխավ կառուցվել է որպես կրթարան՝ հայ որբերի համար: Կիպրոսի բնապահպաններն էլ վճռականորեն ընդդիմանում են դպրոցի կանաչ պուրակը ոչնչացնելու հեռանկարին: Եթե շենքը չի քանդվում, ապա հողի արժեքը, որի վրա կառուցվել է, ամբողջությամբ ընկնում է: Այսինքն, այլեւս ձեռնտու չի լինի գնել կամ վաճառել: Ուրեմն, դպրոցը վերաբացելուն խոչընդոտող հիմնական հայտանիշներից մեկն արդեն չկա: Բայց այսօր Մելգոնյանի փակմանն ընդդիմացողները, ցավոք, այն բացելու իրավասություն չունեն: Որոշողն ու իրավասուն դարձյալ ՅԲԸՄ-ն է: Իսկ ՅԲԸՄ-ն որոշել է որպես «փոխհատուցում» Երեւանում նոր վարժարան հիմնել: Իսկ Մելգոնյան վարժարանի կալվածքի վերաբերյալ, ինչպես նշում է Համալյանը, «որեւէ որոշում կայացված չէ տակավին, բայց պիտի ըլլա կարգադրություն, որ լավագույն ձեւով օգտագործվեն այդ կալվածի կարելիությունները»:

ՅԲԸՄ կենտրոնական խորհրդի անդամ Զերոլ Ասլանյանը Մելգոնյանի փակումը բացատրում է այն հանգամանքով, որ դպրոցի համար ՅԲԸՄ-ի կատարած ծախսերը չեն արդարացվել ոչ ուսման արդյունավետությամբ, ոչ աշակերտների քանակով: Եվ դա է, որ կենտրոնական վարչությանը մղել է որոշում կայացնել, թե անիմաստ է դպրոցը պահել ներկա վիճակով: «Այդ հաստատությունը թեւէ շատ մեծ դեր է կատարել մեր հայ գաղութների համար, բայց միայն անցյալի արդյունավետության համար չէր կարող գոյատևել: Անհրաժեշտ է, որ այն ներկա իրականությանը համապատասխանեցվի, եւ կենտրոնական վարչության կողմից «լուրջ սերտողությամբ» ինչ-ինչ միջոցառումներ արվում են: Հարցը դպրոցը փակելը չէ, այլ լավագույն միջոցառումը գտնելը, որ պիտի ապահովի դպրոցի արդյունավետությունը»:

Հողահատկացում արդեն արվել է Երեւանի Նոր Նորք համայնքում, եւ այսօր ՅԲԸՄ-ի տնօրեն Պերճ Սեդրակյանը հողահատկացման չափերի վերաբերյալ վերջին ճշգրտումներն է անում: Նախատեսվում է ստեղծել մի համալիր՝ սփյուռքի աշակերտների եւ ուսանողների համար բոլոր հարմարություններով: Հիմնական սկզբունքը հետեւյալն է լինելու՝ սփյուռքում, ասենք, ճարտարագիտություն, բժշկություն կամ այլ առարկա սովորող ուսանողը, եթե ցանկանում է հայրենիքում կրթական փորձառություն անցնել բարձրագույն մակարդակով, կարող է այստեղ շարունակել «1 կամ 2 դասանիստ»: Եվ ամենակարեւորը, այստեղ ստացած կրթության «արժեչափերը» կընդունվեն Հայաստանի համապատասխան համալսարաններում: «Մեր նպատակն է ստեղծել մի համալիր, ուր կգան բազմաթիվ ուսանողներ սփյուռքից, կշփվեն հայ իրականության եւ սփյուռքի տարբեր շրջանների ուսանողների հետ», ասում է Արթուն Համալյանը: Նույն բանն արդեն իրողություն էր Կիպրոսի Մելգոնյան վարժարանում, եւ ամենեւին պետք չէ հին հեծանիվը ջարդել, նմանակը սարքելու համար: Հայաստանում արդեն ունենք շուրջ 1400 դպրոց:

Կարելի էր դրանցից մեկը կամ երկուսը «որդեգրել»: Ի դեպ, ոչ մի կերպ չհաջողվեց ավելի մանրակրկիտ տեղեկություններ ստանալ Մելգոնյան վարժարանի ճակատագրի վերաբերյալ: Ինձ քաղաքավարի մերժում էին՝ ասելով, որ օրվա քննարկման խնդիր չէ:

ԿԱՐԻՆԵ ԴԱՆԻԵԼՅԱՆ